205
9-92

205
Կ-92

# ԿՏԱԿ

Տեառն մերոյ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Թարգմանեալ

Ի Ռուսաց լեզուէ 'ի Հայ բարբառ

'ի Յովակիմայ Լազարեանց

Յաշակերտէ գերահռչակ Ճեմարանին

Տեառն

ԵՂ. ԼԱԶԱՐԵԱՆՑ:



1827. 'Ի ՄՈՍԿՈՎ. ՌՄՀԶ.

'Ի Տպարանի Օգոստեան Սեմէն.

Ընթերցեալ զառաջակայս թարգմանել գրուած, և չգտեալ յայնմ ինչ հակառակ ս̃բ հաւատոց և եկեղեցւոյ մերում կ̃մ բարի վարուց, հրամայեցաք տպագրել յօգուտ հոգեսէր հաւատացելոց.

[illegible]

[illegible]

'ի 12 · յունիսի 1827,

'ի Մոսկով.

Гос. Публ. Библиотека
им. А. Мясникяна
5037
38

Ողորմած Տեարք ։

Ընծայելի զգացումն բարեաց , զոր գը-տի ես ուսանելով յուսումնարանի ձերում և անգլէն Ձեր առ իս բարեկարգուն յա-րուցին ՚ի սրտիս զկատարեալ առ Ձեզ երախտագիտութ ։ Շարժեալ յայսմանէ, որոշեցի զմիտս հրատարակել զայն ընծա-յաբերութ առ Ձեզ զկարևոր աշխա-տանս իմ ՚ի Թարգմանութե ։

Արժանի արարէք բարեհաճ ընդունե-լութե զայս նուէր , իբրու զնշան խորագոյն հպատակութե առ բարերար անձինս

Ձերդ Մեծազնութե

Ողորմած Տեարց

Ամենախոնարհ ծառայ

Յովսէփ Սագինեանց ·

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

### Առ Ընթերցողս ։

’Ի թարգմանել զայս գրքոյկ ’ի Ռուսաց լեզուէ ’ի Հայ, ունէի զմի և եթ ցանկութի՛ւն, մատուցանել զօգուտ աշխատանաց իմոց, և բանալ նոցա զուղղագոյն ուղի Քրիստոնէական կատարելութեան ։

Սիրողին ճշմարտապաշտութե՛ան առանց երկբայութեան գտցեն աստ զհոգևոր գանձ, զոր որում և առաջի դնեմ զաշխատութիւնս իմ նոցին բարեհաճութեան ։





# ԱՏԵՆ

## Տեառն մերոյ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ո՛չ է պարտ երկբայել, ընթերցո՛ղ ըզ
նոր կտակարան, թէ Յ̃ս Ք̃ս ունէր ը̃
երկուութիւն կամս թողուլ մեզ զկանոնս և
զվարդապետութ̃ինս . նման հոգևոր կտակի .
յորում յայտ առնէ զվերջին զիւր մտ̃ կա-
մըս . ընթեռնլով զսբ̃ յիշատակեալ գիրն
չէ պարտ մոռանալ . զի Յ̃ս Ք̃ս է մ̃
մեր օրինակ . և զի Ճշմարիտ բարեպաշ-
տութիւն կայանայ ’ի նմանակցութ̃ նորա . յոր-
պիսի և իցէ վիճակի ։

§ 1.

❋ Թողում ձեզ յօրինակ զանմեղութիւն սր-մանկութեան իմոյ։ Ջանացէք անդադար հան-դարտեցուցանել զմիտս ձեր։ մի՛ հպար-տանայք իմաստութեամբ և լուսաւորութեամբ ձերով։ Ծաներուք. զի ոչ մտջիք յարքայութիւն երկ-նից. եթէ ոչ լինիջիք մաքուր սրտիւ. իբրև զմանկտիս։

§ 2.

❋ Թողում ձեզ զաղքատութիւն իմ։ Նաւ այնո-ցիկ. որք առանց տրտնջանաց կեան 'ի տը-նանկութեան. խոստանամ զյաւիտենական զեր-ջանկութիւն։ մի մոռանայք. թէ ես ծնայ 'ի մսուրս ապրէի աշխատութեամբ ձեռաց և զի յո՛ւմ 'ի կեանս իմ ոչ ունէի տեղի հան-գստութեան.

§ 3.

❋ Թողում ձեզ զկատարեալ զիմ հրնա-զանդութիւն առ հրամանս Հօր իմոյ երկնայ

նոյ ։ Պարապումն իմ և կերակուր միմիայն էին կատարումն կամաց նր՟ ։ Նոյս եղէ նմա հնազանդ մինչ 'ի մահ և մինչ 'ի խաչ մահու ։ Նոյն արդ համբերեցէք գոհութ՟ ա՟մ թշուառութեց ․ որովք հաճոյ լինի նմա փորձել զձեզ ։

§ 4.

❋ Թողում ձեզ զյարգութ՟ի և զհնազանդութ՟ի իմ առ ծնողս իմ ։ ըս՟ օրինակի որդւոյն ա՟յ հնազանդելոյ արարածոց իւրոց ․ ուսարուք և դուք հնազանդել իշխանաց ձերոց ․ որպ՟ի և իցեն նոքա ։ մի հաւատայք սեպհական կամաց ձերոց ․ զի այն է վտանգաւոր թշնամի ձեր ։ Ուսարուք թագաւորել 'ի վ՟ր այնր յա՟մ դիպուածս ։

§ 5.

❋ Թողում ձեզ զլռութ՟ի , զոր կատարեցի ես յընթացս ( 30 ) ամաց ։ դիտացէք ․ զի սիրտք ձեր ոչ կարասցեն մնալ մաքուր ․

և ինքեանք իսկ անկջիք 'ի մեծամեծ յանցանս ․ եթէ խօսեսջիք զբազմաց ։ Ձանասպաղ խօսակից լերուք ը̃ ոյ̃ ․ լուարուք զբանս Ն̃ր, և բարբառեցէք որչափ հնար իցէ սակաւ ը̃ մարդկան ։

§ 6.

Թողում ձեզ զյօժարուն̃ իմ առ առանձնաւոր և համեստ կեանս ։ Թէպէտ ես եկի յաշխարհ վ̃ քարոզուն̃ և փրկուն̃ մարդոյ ․ ո́չ հայեցեալ յայն ․ կեցի ես անյայտ ը̃ աղքատ փայտագործի միոյ ․ և միշտ փախեայ 'ի պատուոյ ։ մի խնդրէք զփառս երկրայինս ․ զի մի զրկեսջիք 'ի յաւիտենական փառաց յապագայ կեանս ։

§ 7.

Թողում ձեզ զջերմեռանդուն̃ս․ որով ես 'ի մանկուն̃ իմ կատարեցի զամ̃ պարտաւորուն̃ս օրինաց ։ ը̃ ծնողաց իմոց գը̃նացի միշտ աղօթել 'ի տաճար ․ Նու արդ

կատարեցէք զեկեղեցական արարողութիւնս առանց ամ՟ աշխարհական ներողութեան։ փախերուք յօտարական գործոց. գործեցէք զամ՟ հարկաւորս պաշտօնասիրութ՟ և համարեցէք վսեմագոյն ինչ զկատարումն պատգամաց ո՟ն այ՟ ձերոյ։

§ 8.

❉ Թողում ձեզ զհաստատութիւն հոգւոյ իմոյ ը՟դէմ փորձութեանց սատանայի յանապատի։ մի զարհուրիք յորոգայթից նորա։ Աղօթեցէք առ իս. լերուք հաստատուն 'ի սէր ձեր առ իս։ լերուք հնազանդ և հըսկեցէք անդադար վ՟ փրկութեան հոգւոյ ձերոյ։

§ 9.

❉ Թողում ձեզ զհրաժարումն իմ 'ի մեղաց։ Ես իջի յերկնից, կեցի յաշխատանս և 'ի հալածանս։ Եղի զարիւն իմ 'ի վ՟ր խաչի միմիայն վ՟ այնր. զի կործանեցից զգլուխ վիշապին այսորիկ։ Եւ արդ հեռացարուք 'ի մեղաց որչափ հնար ի-

ցէ · և փախերուք յայնմ աւուրէ · որ կարէ ածել զձեզ 'ի յանցանս ·

§ 10.

❊ Թողում ձեզ զջերմեռանդութիւն իմ առ աղօթս ։ Անցուցանելով զօրն 'ի քարոզութե ժողովրդոց 'ի բժշկութե հիւանդաց · յաբարչութե ամենեցուն զբարիս , նուիրեցի ես զգիշերն աղօթից առ 'ի խնդրել վս̃ ձեր զշնորհս յմյ ։ Աղօթքն է կերակուր հոգւոյ ։ Նա ը̃ այսմ ոչ գտջիք զհոգևոր զիմաստութիւն եթէ ոչ աղօթիցեք ։ Ի բաց թողէք 'ի սրտից ձերոց զամ̃ աշխարհային մտածմունս և զցանկութիւս · խլեցէք յար մատոյ ձերոյ զայն ամ̃ · որ ինչ կարէ վտանգաւոր լինել նմ̃ 'ի միաբանութե ը̃ իս· խորհեցարուք տիւ և գիշեր զչարչարանաց իմոց , զփառաց իմոց · զօրինաց իմոց · զառաքինութեց զորս թողի ձեզ յօրինակ ։ Յիշեցէք զբարեգործութի իմ · մի ծածկէք առաջի իմ զպիտոյս և զվիշտս ձեր · զի գիտացէք զամ̃ որ ինչ 'ի ձեզ գոյ 'ի սրր

տի։ Իմացարուք, զի յա՟մ ժամանակի պատ րաստ եմ մխիթարել զձեզ, առաջնոր- դել 'ի բարի ձեզ Ճանապարհ, և լուսա ւորել զմիտս ձեր։ Եւ արդ աղօթեցէք անդադար. զի մի անկանիջիք 'ի վտանգ, կարդացէք զիս 'ի նեղու՟ն ձերում յա՟մ գոր ծըս ձեր օրհնեցէք զանուն իմ, և լերուք հաւատարի, զի աղօթիւք մ՟ք և ջերմեռան դըն զա՟մ. զոր ինչ խնդրիցէք. տացի ձեզ։

§ 11.

Թողում ձեզ զկարեկցութ՟ի իմ առ հի- ւանդս։ Բժշկելով զմարմնաւոր ցաւս ն՟ց. բժշկէի 'ի միասին և զվիշտս հոգւոց ն՟ց. ես պատուիրեցի առաքելոց իմոց. զի և ն՟ք այսպէս վարեսցին։ Եւ դուք. ը՟ օրինա կի նոցին. օգնեցէք հիւանդաց, և մխի թարեցէք որչափ կարօղ իցէք, տարայք տկարութ՟եց ն՟ց և ուսուցէք նոցա 'ի գործ ածել յօգուտ հոգւոյ զմարմնաւոր չարչա րանս պատրաստելով զանձինս առ մահն։

§ 12.

❊ Թողում ձեզ զհոգողուն իմ, զոր ես ունէի առ 'ի կատարել զամ պատուիրանս Հօր իմոյ։ Յորովայնի մօր իմոյ օրհնեցի զնախընթացն իմ։ Զնախակարգեալն լինել ջահ շնորհաց իմոց, ծագեցաւ և նա, ոչ հայեցեալ առ այն, ես ընկալայ 'ի նմանէ զսբ մկրտութն. իբրև մարդ. ծնել ի մեղս։ Եւ արդ մի ամաչէք լինել խոնարհ առաջի մարդկան, այլ ամաչեցէք լինել յանցաւոր։ Յանուն իմ բարի է հնազանդիլ մինչև ծառայից ձերոց,

§ 13.

❊ Թողում ձեզ զներողութն իմ առ տկարութիւն առաքելոց և աշակերտաց իմոց. Ներկայ Քրիստոնէական սէրն ողորմած է և ընթանայ զգուշութբ ը անկատար անձինս, 'ի թեւադրել նց զհոգևոր իմաստութն։ մի կշտամբէք երբէք զընկերն 'ի բնական պակասութս նր, և լերուք առ

նաներող ։ Համբերեցէք խստութե այնոցիկ, ը՟ որս կեայք, և ջանացէք չզայրացուցանել զնոսա ։

§ 14.

❋ Թողումն ձեզ զջերմեռանդութի և զպաշտօնասիրութի իմ առ տաճարն այ ։ Զգոյշ լերուք. զի մտեալ յայնմ մի ցրուեալ մտօք և անմաքուր սրտիւք դարձուցանել զսբ օթարանն զայն յայրս աւազակաց. երկերուք լինել ապականիչ սրբութեան ։

§ 15.

5037
39

❋ Թողում ձեզ զսբ օրէնս իմ ։ Վարեսջիք ը՟ կանոնաց, յայնմ գծագրելոց, քանզի ը՟ այնմ դատելոց էք ։ Չիք այլ հնար ինձ հաճոյանալոյ և ո՛չ գոյ այլ ճանապարհ. որ առաջնորդեսցէ առ յաւիտենական բարին . . . ընթացէք ը՟ այնմ անշարժ ջերմեռանդութբ ։

им. А. Мясникяна

§ 16.

❋ Թողում ձեզ յօրինակ զառաքինութիւնս իմ. 'ի միտ առէք. զի ես եմ Տէր ձեր. Հ՛այր ձեր. Գլուխ ձեր և Ա՛ծ ձեր։ Հ՛այր իմ երկնաւոր միայն զայնոսիկ խոստովանի ճշմարիտ որդի իւր. որք յամենայնի հետևին նմանիլ ինձ։ Ջանացէք իմանալ զամ՛ ըզ կենցաղավարութիւնս իմ. զի լիցին ձեզ օրինակ և արասցեն զձեզ հաղորդակից յաւիտենական փառաց։

§ 17.

❋ Թողում ձեզ զԱ՛ծային զբանս զխորհուրդս իմ։ խորհեցարուք զայնցանէ ըզ տիւ և զգիշեր։ Յարգեցէք զայնս մինչև 'ի բերանս այնոցիկ, որք ո՛չ նմանեցուցանեն զգործս իւրե՛նց աւետարանական վարդապետութե՛ն։ Կալարուք միշտ զհաստատուն հաւատս։ Կատարեցէք ջերմեռանդութբ զամ՛. զոր ինչ հրամայեցի ձեզ. և ստասջիք անպատճառ զամ՛ զխոստացե՛լս յինէն.

§ 18

Թողում ձեզ զշնորհս իմ. ծաներուք զի առանց շնորհաց ոչինչ կարէք առնել, զի նա թելադրէ ձեզ դառնալ 'ի մեղաց և արգելու անկանիլ յայնմ։ Խնդրեցէք անդադար 'ի տեառնէ Յս՜ . զի պարգևեսցէ ձեզ զշնորհս իւր։ Քանզի նա տացէ ձեզ գործել զառաքինութիւս, և տացէ ձեզ զօրութիւն կատարել իսկուք զպատուիրանս Յս՜ ։ Տպաւորեցէք 'ի սրտի ձերում զբարերարութիւն իմ զոր ցուցի ձեզ հեղմամբ արեան իմոյ։ Նոքա՝ որք ոչ ջանան կրկնապատկել զհոգևոր գանձս . չեն արժանի հոգևոր շնորհաց և զրկին յայնմանէ։

§ 19.

Թողում ձեզ զնախանձայուզութիւն իմ առ փառս Հօր իմոյ երկնաւորի։ 'Ի միտ առէք . զի դուք ստեղծեալ էք առ 'ի փառաւորել զանուն նորա։ Եւ արդ փառաբանեսցեն զնա բարի գործք ձեր։ Օի

րաքանչիւր գործ գործեցէք · զիւրաքան-
չիւր բառս արտասանեցէք 'ի փառս ար-
արչին ձերոյ ։ Ահա միմիայն հնարք ստա-
նալոյ զբարի հատուցումն 'ի հանդերձել
կեանս ։

§ 20·

❋ Թողում ձեզ զհեզութիւն իմ ։ Ուսա-
րո՛ւք զայն գնարք է ամենեսին ։ 'ի բաց
կացէք 'ի բարկութէ ։ Լռեցէ՛ք յորժամ տե-
սանէք զանձինս ձեր զայրացեալ և ան-
յապաղ ջանացէ՛ք ջնջել զամ՟ զյանցա-
նըս ընդդէմ հեզութե ։ կատարելով զայս խը-
րատ · ընկալջիք զարքայութի երկնային ըղ
խոստացեալն հեզոց և խոնարհաց ։

§ 21·

❋ Թողում ձեզ զհամբերութիւն իմ ։ 'ի
Թշուառութիս յիշեցէք · զի վ՟ սիրոյ իմ
առ ձեզ համբերեցի ես հայհոյութեց և պատ-
կուելի մահու առանց ամ՟ տրտնջանաց ։
Զամ՟ վիշտ և զտրտմուն առաջի ձեր Ա.Ծ.

խոնարհութ̃ բարձէք զխաչն ։ Նա մխիթարեսցէ զձեզ ։

§ 22.

❈ Թողում ձեզ զսէր իմ առ մանկունս ։ Ես զնոսա օրհնէի բազմիցս հրամայէի թողուլ միշտ առ իս ։ քանզի ը̅ անմեղութե̃ իւրեանց , Ճշմարտապէս զարդացեալ են հոգւով սրբով ։ Զգոյշ լերուք գայթակղեցուցանել զմանկունս մեղօք ձերովք · այլ ուսուցէք նց̃ սիրել զիս առաւել ք̃ զամ̃ և այնու արասջիք զնոսա արժանաւոր շնորհացն Ս.Յ ։ նմանօղ լերուք անմեղութե̃ նոցա և սրբութե̃ բարուց ,

§ 23.

❈ Թողում ձեզ զգթութի̃ սրտի իմոյ առ մեղաւորս ։ Ո̃աներուք · զի դուք ինքեանք իսկ մեղաւոր էք և կրէիք ապաքէն ըղ̃ զարհուրելի տանջանս · եթէ ոչ ես ողորմէի ձեզ ը̅ բարութե̃ իմ ։ Մի կարծէք , թէ դուք գերազանցագոյն էք քան զայլս

աղօթեցէք վ՟ մեղաւորաց, մի կշտամբէք զնոսա 'ի մեղս ը՟ սիրոյ Քրիստոնէական. լերուք ներողամիտ յանցանաց նց՟. այլ սակայն ոչ լուծանելով զճշմարտութիւն և մի համբաւեսջիք երբէք զմեղս մերձաւորաց.

§ 24.

Աղողում ձեզ զնախանձայուզութի՟ իմ առ փրկութի՟ հոգւոց։ խորհեցարուք զայնմանէ զի ես ստեղծի և չարչարանաց հանդուրժեցի վ՟ փրկութե՟ հոգւոց ձերոց։ Օգուշ լերուք, զի մի կորիցէ և ոչ մին 'ի նոցանէ, և զի մի լիջիք պատճառ կորստեան այնր վատթար օրինակօք և անպատեհ բանիւք. եթէ ոչ հոգասջիք զմեռելութե՟ կրից. կորուսջիք ապա զհոգի ձեր և 'ի զուր մնասցեն մարմնաւորութի՟ և մահ իմ վ՟ ձեր։ Եւ արդ հսկեցէք առաւել վ՟ հոգւոց ձերոց. յիշելով զսէր իմ առ այն. թէ որչափ ծանրագին ինձ եղև ազատութի՟ նր՟ 'ի յաւիտենական դժոխոց։

§ 25

Թողում ձեզ զանչափ զզուուն իմ 'ի կեղծաւորուէ ։ Գիտէք դուք ․ թէ որպիսի զօրութբ ընդէմ կացի կեղծաւորաց փարիսեցւոց ․ ամաչեցէք հետևիլ նոցա ․ զի մի հաղորդ լիջիք Թշուառուեց ․ զորս ես սպառնացայ նոցա ։ Ջանացէ՛ք գտանել զՃշմարիտ և զհոգևորն՝ զառաքինուին ․ Արտաքին կենցաղավարուիք ձեր պարտեն համեմատիլ արդարուե սրտի ձերոյ ։ Առ ինչ ծառայեսցէ Ածապաշտ կերպն ․ եթէ զայրացուցանէք զիս ծածուկ յանցանօք ։ Անհնար է գտանել զառաքինուին՝ ․ եթէ հոգասջիք միայն զարտաքին ․ այլ ո՛չ ըզներքին իմաստուէ ։

§ 26

Թողում ձեզ զկատարեալ հեռացումն իմ 'ի բարեաց աշխարհի ։ Ես կացի յաղքատուե ․ զի զձեզ հարստացուցից և ուսուցից ձեզ զարհամարհուն առ ապակա-

նացու հարստութ՟ս այսր աշխարհի ։ Օ՜ի այնոքիկ լսլեն յարմարոյ զսերմունս հոգևոր առաքինութ՟ե ․ ծնանին զհպարտութ՟ի և փակեն ձեզ զդրունս առ երկնային արքայութ՟ն Գոհացարո՛ւք զԱ․Ծ վ՟ն ազատութ՟ե յայսչափ վտանգաւոր արգելմանց առ փըրկութ՟ի հոգւոյ ձերոյ ։ Խնդրեցէք ․ զի հարստացուսցէ նա զձեզ երկնային պարգևօք ․ և ուրախ լերուք 'ի մէջ երկրային թշուառութեանց ։

§ 27․

※ Թողում ձեզ զհոգի պաշտօնասիրութ՟ե առ Հայր իմ ։ Որչափ դուք պարապեալ էք ․ այնչափ սիրտք և միտք ձեր պարտին արձակիլ առ Ա․Ծ ։ Խորհեցարուք անդադար զնմանէ և լերուք միամիտ , զի նա ո՛չ թողցէ զձեզ 'ի հարկաւորութ՟ե ձերում առանց օգնութ՟ե ։

§ 28

※ Թողում ձեզ զյօժարութ՟ի իմ առ առաքի

նուէս ։ Ես ո՛չ երբէք մերժեցի զայնոսիկ· որք դիմէին առ իս ։ Օգնեցէք ախորժանօք սրտի մերձաւորաց ձերոց , մի ածէք ՚ի վ̃ր նոցա զարհամարհութի̃ւն և զանհաճութի̃ւն ։ Ես վարձատրեցից զձեզ վ̃ն փոքրագոյն բարւոյ · զոր առնիցէք յանուն իմ ։

§ 29.

❋ Թողում ձեզ զհոգևոր ուրախութի̃ն և զհանգստութի̃ն իմ ։ Թէպէտ ՚ի ժամանակս մարմնաւութե̃ն իմոյ կացի յաշխատանս և ՚ի չարչարանս , բայց հոգի իմ ո՛չ դադարէր երջանկանալ ։ Դուք ճաշակեսջիք զայս մխիթարութի̃ն · եթէ կատարեսջիք զկամս իմ և որոնեսջիք միայն զփառս իմ ։ Ի թշուառութի̃ս յիշեցէ՛ք · զի անուանք ձեր գրեալ են ՚ի գիրս կենդանեաց ։

§ 30.

❋ Թողում ձեզ զսէր իմ առ թշնամիս իմ ։ Յիշեցէ՛ք , զի ես հեղի զարիւն վ̃ն այնոցիկ · որք զիս մատնեցին · և վ̃ն նոցա աղօթեցի և արարի նոցա զբարիս · որք

զիս անարգէին։ Լերուք ողորմածք. եթէ կամիք. զի Հայրն երկնաւոր լիցի առ ձեզ ողորմած ։ Արարէք և այնոցիկ զբարիս. որք առնեն ձեզ զչարութիւն. յայնժամ լինիջիք արժանաւոր որդիք Հօր իմոյ.

§ 31.

Թողում ձեզ զսուրբ մարմին իմ. զի այն լիցի ձեզ հոգևոր կերակուր ։ Ջանացէք լինել արժանի մատչելոյ բազմիցս առ այն։ Ընկալարուք զայն պաշտօնասիրութեամբ և սիրով ։ Երկերուք դառնալ առ չարն . ընդունելով զսուրբ խորհուրդս զայս . և 'ի ձեռն այնր լինել վերստին յանցաւոր մահու իմոյ.

§ 32.

Թողում ձեզ զսուրբ արիւն իմ . այն եղև հեղեալ վասն փրկութեան հոգւոց ձերոց ։ Ճաշակելով զայն անարժանապէս և 'ի գործածելով 'ի չարն զշնորհս իմ . դուք դատապարտեալ լինիջիք . շահեսջիք այսու փրկական բալասանով 'ի բժշկել զհոգևոր վէրս և 'ի լուանալ զմեղս ձեր ։

§ 33.

✻ Թողում ձեզ զսր̄ հոգին իմ․ Կենցաղավարեսջիք միմիայն ընդ ազդեցութե̄ այնր․ Մի՛ զայրացուցանէք զնա սակաւ ջերմեռանդութեամբ ձերով։ Ընթացէք յայսմ յաշխարհի ըստ հոգւոյ, այլ ոչ ըստ մարմնոյ․ փախերուք ՚ի մահկանացու մեղաց, զի Հոգին Սր̄ ոչ թողցէ զձեզ․ ՚ի սատանայ զյաւիտենական ժառանգութի̄ն զխոստացեալն ճշմարիտ որդւոց իմոց ։

§ 34.

✻ Թողում ձեզ զխրատ իմ․ բորբոքեալ սիրով առ Հայր իմ Ա̄Ծ․ զի սիրեսջիք զնա յամ̄ սրտէ ձերմէ և յամ̄ հոգւոյ ։ Սիրեցէք զնա առաւել քան զամ̄ ինչ և մի՛ գործէք ինչ ընդդէմ կամաց արարչին․ զի մի բարկասցի նա ։ Ներկայ ապացուցումն սիրոյ առ Ա̄Ծ է ճիշդ կատարումն պատուիրանաց իմոց․ և նախանձաւոր ցանկութի̄ լինելոյ ինձ յամ̄ի հաճոյ ։

§ 35.

❋ Թողում ձեզ զխաչ իմ ։ Նա էր մխի-
թարութիւն իմ 'ի ժամանակի կենաց. իսկ
այժմ է փառք իմ ։ Բարձէք զխաչն սի-
րով. քանզի այն է դերագանցն նշան և բա-
ժին ամ՟ ընտրելոց ։ Համբերեցէք վշտաց
և նեղութեանց. նոյնպէս և ծանրագին մասանց
խաչի այսր։ Մի՛ վաստակեսջիք 'ի խաչից
զորս 'ի վ՟ր ձեր եդից. քանզի օգնեցից
ձեզ տանել զայն ։ Ընկալարուք զայնս
ջերմեռանդութ՟. և գտջիք զհանգիստ
հոգւոց ձերոց ։

§ 36.

❋ Թողում ձեզ զփշեայ պսակ իմ ։ Եթէ
ոչ զգեցջիք զայն 'ի գլուխս ձեր. ոչ լի-
ջիք արժանի զգենուլ զպսակն փառաց 'ի
հանդերձեալ կեանսն ։ Մի՛ պարապիք ար-
տաքին զարդարանաց գլխոց ձերոց. և
այնու ամենայնիւ. որինչ ախորժ թուի յա-
չըս մարդկան ։ Սիրեցէ՛ք զհամեստութիւն և
զողջախոհութիւն ։

§ 37.

❊ Թողում ձեզ զբևեռս · որովք բևեռեցայ 'ի խաչին ։ Բևեռեցէք և դուք զանձինս յայն մեռելուք կրից · Ճիշդ կատարմամբ ամ՟ պարտաւորութ՟ց ձերոց · երկիւղիւ դատաստանի տեառն և սիրով առ նա · լերուք հաստատուն յառաքինութ՟իս մինչ 'ի վերջին ժամ մահու ։

§ 38.

❊ Թողում ձեզ զարտասուս իմ ։ Յիշեցէք · զի երկրային ուրախութի է այնչափ սակաւաժամանակեայ · որչափ ունայն և մեղսալից · և զի ընթանայ զհետ այնր յաւիտենական վիշտ · և ը՟ հակառակ այնր նոքա որք լան զմեղս իւրեանց վարձատրեսցին յաւիտենական մխիթարութ՟ք ։ Անարդ · հեղէք զարտասուս · տեսանելով քանի վտանգաւոր թշնամիք յառնեն ը՟դէմ փրկութ՟ե հոգւոց ձերոց · բայց յայժմ ողբալի աշխարհի մի ցաւիք միայն վ՟ս անձանց ձերոց · այլ լացէք և վ՟ս այնոցիկ, որք վշտագնեն զիս մեղօք իւրովք ։

§ 39.

Թողում ձեզ զհաստատութիւն յոյս իմ առ Տ.Ծ. Թէպէտ այնպէս երևէր. զի նա եթող զիս 'ի խաչին. բայց ես միշտ մնացի անշարժ 'ի սէրն առ նա։ Ընդէ՞ր երկբայիք վասն ողորմածութե՟ նորա։ Ո՜ մտաւածէք. զի նա 'ի զոհ մատոյց զիս վասն ձեր. և զի ո՛չ եթող զձեզ յայնմ ժամանակի. երբ ոչ դադարէիք վշտագնել զնա յանցանօք։ Երկբայութի՟ և շփոթ ձեր չէ հաւատար կարողութե՟ և բարութե՟ նորա. Ամենամեծն Տ.Ծ. 'ի բարձանց երկնից հոգայ վ՟ ձեր։ Կոչեցէք զնա յօգնութի՟ և նա լուիցէ աղօթից ձերոց։

§ 40.

Թողում ձեզ զսէր իմ առ Ճշմարտութի՟. Ես իջի յերկնից. զի քարոզեցից ձեզ զայն։ Ես մեռայ մարմնով և յարեայ. զի վկայեցից վասն ճշմարտութե՟։ Սիրեցէ՛ք և պատուեցէք զայնս. որք ուսուցանեն զճշմարտութի՟. և մի փոխէք զայն ընդ օրպի

սի և իցէ բարւոյ աշխարհի ։ Եթէ ոչ խոստեսջիք զճշմարտութիւն առաջի մարդկան ․ հրաժարեսցի նա 'ի ձէնջ առաջի Տ․Յ ։ Եթէ թողուցուք զայն և նա թողցէ զձեզ և արկցէ 'ի մոռացօնս և 'ի մոլորութե մտաց ։ Եթէ դուք դաւաճանեսջիք ճշմարտութե ․ տացէ զձեզ նա յաւիտեան 'ի ձեռս թշնամւոյն , որ հօր խաբէութե սատանայի ։ Քանզի սատանայ է հայր ստախօս կեղծաւորաց և այնոցիկ որք կուրացեալ են մոլորութեամբ ։ Դուք չէք արժանի ողորմութե Տ․Յ․ եթէ ծածկէք զմեղս ձեր ․ առ 'ի ոչ ձգել յանձինս զնախանձ մարդկան , կացէք ճշմարտութբ և փրկեսջիք ։

§ 41.

※ Թողում ձեզ զանարատութի իմ ։ Ես յաղթեցի կարգադրութե բնութե ․ զի առի զմարմին 'ի մէջ կուսէն և ինձ բարեհաճոյ են ողջախոհ հոգիք ։ Ի վերայ երկրի այսր ճաշակեն նոքա զԱ՟ծային բերկրութին և ընթանան զհետ իմ յարքայութի երկնից ․

Պոկեցէ՛ք 'ի վե՛ր մարմնոյ ձերոյ. յարդե-
ցէ՛ք զայն որպէս ջահ ։ Սանձեցէք զմիտս
և զերևակայութիւնս հեռացուցանելով զամ՟
վտանգաւոր մտածմունս. զի մի՛ զրկես-
ջիք յանապատութենէ և յանմեղութենէ սրտից ։

§ 42

※ Թողում ձեզ զհոգևոր խաղաղութիւն իմ զանդորրութիւն Քրիստոսի. յուսալի. զոր աշխարհս այս ոչ կարէ տալ և ոչ բառնալ. և զոր աշխարհային մարդիք ոչ գտան վ՟ն այն, զի խաղաղութիւն է հոգևոր պարգև հոգւոյն սրբոյ. և գտանի միայն յաղթութեամբ կրքից. հրաժարմամբ յամ՟ երկրային բարեաց. և կատարեալ հպատակութեամբ կամաց իմոց ։ Անարգեցէք զայն ամ՟. զոր ինչ աշխարհս այս յարգէ. և ջանացէք ինձ հաճիլ և գտանել զերկնային արքայութիւն ։ Մի՛ ցանկայք ոչ ուրուք մեծաւ ջերմեռանդութեամբ և մի շփոթեսջիք վաստթար զարգացմամբ 'ի գործս ձեր ։ Պայեցարուք 'ի ցաւս և յամ՟ վտանգս այսք

կենաց որպէս 'ի վերայ հաւատարիմ աւան-
դոյ սիրոյ իմոյ և ճանապարհի · որ առաջ-
նորդէ 'ի յաւիտենական բարին : փախե-
րուք ևս և 'ի թեթև յանցմանց երկբա-
յութե 'ի պատուիրանս իմ : Սիրեցէ՛ք զաշ-
խատանս զմիայնակեցութե զաղօթս և կա-
տարեցէք զպարտաւորութիւնս ձեր : Մի՛ յուշ-
ածէք զայն · որ ինչ կարէ վշտագնել ըզ-
ձեզ : Ընկալարուք զամ 'ի բարին · և
ապացուցէք խոստակցութեամբ ձերով վա-
րուք ձերովք · զի հոգին ձեր է անդորր :
Մի՛ մտանէք 'ի գործս · որք ոչ վերա-
բերին առ ձեզ · մի՛ յարեսջիք յայն ինչ
որ աշխարհաւ բառնի 'ի ձէնջ : Տեղի
տուք յօժարութեամբ և բարեհաճութ
այլոց կարծեաց և 'ի հակաճառութեանց զգոյշ
լերուք · զի մնասջիք միշտ 'ի համաձայ-
նութե ը. մերձաւորս : Լերուք հաւաստի ·
զի սիրտք ձեր լիցին 'ի մէջ աղմկի յամ
ժամ · մեղաւոր և տարաբաղդ էք · ե-
թէ ոչ լոկ միայն որոնեսջիք զանդորրու-
թիւնն և զերջանկութե ձեր :

§ 43.

❦ Թողում ձեզ զսիրելի աշակերտն իմ. Նման նմա եթէ կամիք արժանանալ ողորմուե իմոյ հետեւեցէք անարատուե նորա կատարեալ հեռաւորութեան նորա յայսմ աշխարհէ վ՞ սիրոյ առ իս, հաստատուե ՚ի պատուանդանս խաչի իմոյ: Խընդրեցէք զնա. զի նա աղօթեաց առ իս վասն ձեր: Եւ նա խնդրեաց զողորմութիւն յաթոռոյ Ն՟Յ:

§ 44.

❦ Թողում ձեզ զերանելի զառաքեալս իմ: Յարգեցէք զնոսա. իբրեւ զմտերիմ բարեկամս իմ եւ զուսուցիչս եկեղեցւոյ: Մի հեռանայք երբեք յուղղափառ ուսմանց եւ օրինակաց. զորս նոքա. թողին ձեզ: Կարդացէ՛ք բազում անգամ զառաքինութիւնս նոցա: Կատարեցէք զտօնախմբութիւն աւուրս կարգեալս ՚ի յիշատակ նոցա: Գործեցէք զայս յօժարութեամբ. զի նոքա օգնեսցեն ձեզ ՚ի նեղուե եւ բարեխօս լիցին վ՞ փըրկուե հոգւոց ձերոց:

§ 45.

❈ Թողում ձեզ զամենասուրբ մայրն իմ. նա լիցի ձեզ մայր և պաշտպան այցելու. Յիշեցէք զհրաշալի մարմնաւորութիւն իմ, յիշեցէք թէ որչափ սրբութիւ՛ նա ծառայեաց ինձ ։ 'Ի հարկաւորութիւնս և 'ի վիշտս ձեր, աղօթեցէք առ նա, և նա խնդրեսցէ վասն ձեր զԱ՟Ծ ։ Հետևօղ լերուք նորին կուսական ողջախոհութեան հնազանդութեան, պարկեշտութեան և ջերմեռանդութեան.

§ 46

❈ Թողում 'ի ձեզ յիշատակ և զանձն իմ իսկ ։ Ո՛վ մուանայք երբէք. թէ որչափ սաստիկս չարչարեցայ վասն ձեր. խորհեցարուք զչարչարանաց իմոց, զօրինաց իմոց և զբարերարութեանց իմոց ։ Սիրեցէք զիքամ՟ սրտէ ձերմէ ամ՟ զգայութեամբ և առաւել քան զամ՟ ինչ.

§ 47.

❈ Խոստանամ ձեզ զարքայութիւն իմ երկ-

նայէին • այլ զմտաւ ածէք • թէ ոչ մտջէք յայն եթէ ոչ թողջէք զգանձս և զպատիւս և, զզբօսանս աշխարհիս այսորիկ • Սորհեցէ՛ք անդադար զհանդերձեալ կենաց, զ.յաւիտենական երջանկութէ, ցանկացէք այնմ ագահութեամբ և կացէք յառաքինութե մինչև 'ի մահ ։

§ 48•

❦ Ջամ ձեզ զօրհնութի իմ ։ Ո՛յն է աշբխւր ամ՛ հոգևոր բարեաց և հաստատուն վահան ը՛զդէմ թշնամեաց յարուցելոց 'ի վերայ քրիստոնէից ։ Մե՛ հոգայք զժամանակաւոր գանձուց ձերոց • զի մի գուցէ լինջիք անարժան օրհնութեց իմոց ։ Եթէ մնասջիք միշտ ինձ հաւատարիմ • ամ՛ պատահմունք • որք կարեն հանդիպել ձեզ, լիցին միջոց փրկութե հոգւոց ձերոց և հայրն իմ երկնաւոր օրհնեսցէ զձեզ 'ի յաւիտենականութե ։

ՎԵՐՋ •

# ԿՏԱԿ

Տեառն Մերոյ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Նու իւրաքանչիւր քրիստոնեայ ։

Երանելի են այնոքիկ · որք լսեն և պահեն զբանս իմ ։

Թարգմանեալ

Ի Ռուսաց լեզուէ 'ի հայ բարբառ

'ի Յովակիմայ Լազարեանց

Յաշակերտէ գերահռչակ Ճեմարանին

Տեարց

ԼԱԶԱՐԵԱՆՑ ։

1827 · 'Ի ՄՈՍԿՈՎ ռմհզ ·

'Ի Տպարանի Օգոստեան Սեմինի ·

Ընթերցեալ զառաջակայս Թարգմանել գրուած, և չգտեալ յայնմ ինչ հակառակ սբ. հաւատոց և եկեղեցւոյ մերում կամ բարի վարուց, հրամայեցաք տպագրել յօգուտ հոգևորը հաւատացելոց.

Պատուանէ [illegible] Միքայէլ Ծայրագոյն
Վարդապետ. [illegible] Սերէոյ [illegible].

Ի 12. յունիսի 1827,
Ի Մոսկով.

# ԽՈՐՀՈՒՐԴ

Տեառն մերոյ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ .

Առ Եւրոպականներ Քրիստոնեայ ։

Եւ 'ի բարձանց իւրոց գթասիրել վ՛ մեր։

§ 1.

❋ Նուիրեցէ՛ք ինձ զսիրտս ձեր . ուսարո՛ւք անդստին իսկ 'ի տղայական տիոց . սիրով բառնալ զբեռն իմ . եւ դուք 'ի վախճանի զգասջիք . թէ որչափ բարի է եւ քաղցր ։ Յայնժամ ճաշակեսջիք ըզպտուղս աշխատանաց ձերոց յայսմ աշխարհի . իսկ 'ի յաւիտենականումն ընկալջիք

զվարձս վասն ամ բարեաց զոր արարիք դուք. և գտջիք զժառանգութն 'ի յերկինս. զխոստացեալն յինէն Ճշմարիտ որդւոց իմոց:

§ 2.

❊ Ուսարուք յինէն զի ես հեզ եմ և խոնարհ սրտիւ: Հետևեցէք այսմ վսեմագոյն խրատու և յայնժամ զուարճասջիք անշարժ հանգստութեամբ 'ի կեանս յայս. և յաւիտենական երջանկութեամբ 'ի հանդերձեալն.

§ 3.

❊ Գլխաւոր նպատակ ձեր եղիցի արքայութն երկնային, և առ 'ի լինել արժանի այնմ, կատարեցէք ճշդիւ զամ, զոր ինչ հրամայեմ ձեզ: Հոգացէ'ք միմիայն վն փրկութե հոգւոց ձերոց և վն հաճոյ լինելոյ ինձ:

§ 4.

❊ Եթէ ապաշխարութն վասն մեղաց ձերոց չէ' ճշմարիտ. մտջիք դուք 'ի խստութեան և 'ի յաւիտենականութե սպասեսցեն ձեզ զարհուրելի չարչարանք:

§ 5.

❋ Եթէ ոչ հրաժարեսջիք յանձանց ձերոց մեռուցանելով զկիրս և խոնարհութբ. ես ոչ ծանեայց զձեզ աշակերտս իմ. և դուք ոչ բերկրեսջիք ուրախութեամբ ընտրելոց իմոց 'ի յերկինս :

§ 6.

Կալարուք զնախանձայոյզ և զջերմեռանդն սէր առ արդարութի՛ն : Իսկ եթէ նման փարիսեցւոց, դիցիք զբարեպաշտութիւնն յարտաքին կերպարանս, ոչ մտջիք յարքայութի՛ երկնից : Ջանացէ՛ք մեծաւ աշխատանօք նմանիլ կատարելութեան Հօր ձեր երկնաւորի. և խորհեցարուք զի դեռ զբազում առաքինութիւնս պետք են ձեզ գործել :

§ 7.

❋ Զգուշացէ՛ք յընդարձակ ճանապարհէն, որ առաջնորդէ առյաւիտենական կորուստըն, և ընթացէք ը՛նեղ ճանապարհն աւետարանի և գտջիք զկեանս յաւիտենա

կանս ։ Իսկ յոյսն վարձատրութեան․ խոստացելոյ ձեզ հեշտացուսցէ զդժուարունն գործոց ձերոց ։

§ 8․

Եթէ ձեռն քո․ ոտն քո և ակն քո գայթակղեցուցանեն զքեզ․ հա՛ն զնա կտրեա՛ և ՚ի բաց ՚ի քէն ա՛րկ․ կորստական և անիծելք են կապք․ որք բաժանեն զձեզ յինէն և զրկեն յանմահուէ․ և արդ փախերուք իբրու ՚ի թունալից օձէ․ յայնմ յա՛մէ․ որ ինչ կարէ դարձուցանել զձեզ ՚ի Ճանապարհէն Ճշմարտութեան և արգելու հասանել յաւիտենական երջանկութեան ։

§ 9․

❋ Հսկեցէ՛ք և աղօթս արարէք անդադար․ զի մի անկանիջիք ՚ի գայթակղութիւն և մի մեռանիջիք յանկարծ ։ ը̅ ժամանակին գործեցէք զբարիս ը̅ կարողութեան վիճակի ձերոյ և պարտաւորութեանց ձերոց․ եղակի նպատակ ձեր եղիցի սէրն

կանս ։ Իսկ յոյժ վարձատրութեան . խոս-
տացելոյ ձեզ հեշտացուսցէ զդժուարուն̃
գործոց ձերոց ։

§ 8.

Եթէ ձեռն քո. ոտն քո և ակն քո գայթակ-
ղեցուցանեն զքեզ . հա՛ն զնա կտրեա՛ և 'ի
բաց 'ի քէն արկ. կորստական և անիծեալք են
կապք . որք բաժանեն զձեզ յինէն և զըն-
կեն յանմահութէ̃. և արդ փախերուք իբրու
'ի թունալից օձէ . յայնմ յամէ̃. որ ինչ կա-
րէ դարձուցանել զձեզ 'ի ճանապարհէն
ճշմարտութեան և արգելուլ հասանել յա-
ւիտենական երջանկութեան ։

§ 9.

❊ Հսկեցէ՛ք և աղօթս արարէք անդա-
դար . զի մի անկանիջիք 'ի գայթակղուն̃
և մի մտանիջիք յանկարծ ։ ը̃ ժամանա-
կին գործեցէք զբարիս ը̃ կարողութեան
վիճակի ձերոյ և պարտաւորութեանց ձե-
րոց . եղակի նպատակ ձեր եղիցի սէրն

որք դատեսցեն զընկերսն ։ Պահեցէք վն
հանդստութեան խղճմտանաց և մի հաղոր
դակից լինիք այնմ, որ ինչ ոչ վերաբերի
առ ձեզ ։ Վարեցէք ը͞ մերձաւորս ձեր
այնպէս․ որպէս դուք կամիք զի նոքա վա-
րեսցեն ը͞ ձեզ ։

§ 12.

Ընդէ՞ր հոգայք և խօսիք զըզմեց․ աստ
սակաւ ինչ է պիտոյ ։ Ընդէ՞ր ցանկայք այնմ
որ ոչ առաջնորդէ ձեզ առ բերկրութիւն ։
Վասն է՞ր զարհուրիք յայնմանէ որ երբէք
դուցէ ոչ պատահեսցի ։ Վասն է՞ր միա-
բանիք ը͞ այնմ․ որ ինչ վերանայ 'ի ձէնջ
և ոչ բերէ զճշմարիտ մխիթարութիւն ։
Հոգամ ես վասն իւրաքանչիւր թռչնոց․
որչափ ևս վասն ձեր ։

§ 13.

Ոչ բաւական միայն դոչել առ իս ․
Տէր․ Տէ՛ր ։ Այլ կատարել զկամս Հօր

եմոյ ։ Հատեց զանպտուղ ծառն և ար-կեց զայն 'ի հուր ․ և արդ խորհեցարուք զտուեալ 'ի ձէնջ խոստմանց 'ի ժամանակս սրբոյ մկրտութեան ։ Աճեցէք յառաքինու՟ե ընթացէք 'ի շաւիղս նորա ։ Ա՛մ գործ ․ զոր առնէք ա՟ծ սիրոյ առ Ա՟յն վարձատրեսցի 'ի յերկինս ։

Յայսոսիկ իսկ երեքտասան հատուածս կցանայ փրկչական խրատն Տեառն մերոյ Յ՟սի Ք՟սի և պարունակի այն ա՟մ․ զոր եւ պարտի կատարել իւրաքանչիւր քրիստոնէի ․ առ 'ի՛ հասանել անդորրութեան հոգւոյ յայսմ աշխարհի և կատարեալ երջանկութեան 'ի հանդերձեալ կեանսն ։

ՎԱԽՃԱՆ ։

[library stamp, illegible]

NL0109488